Նախագահ
Հենրի Բ. Այրինգ
Առաջին Նախագահության
Առաջին Խորհրդական



Ծառայություն և հավերժական կյանք

Փրկիչն ինքնամոռաց ծառայության մեր օրինակն է: Նրա կատարյալ կյանքը նվիրված էր Երկնային Հորն ու Իր Հոր բոլոր զավակներին ծառայելուն: Հոր և Որդու միասնական նպատակն է մեզ բոլորիս անմահություն պարգևել ու հավերժական կյանքի օրհնությունները տալ (տես Մովսես 1.39):

Հավերժական կյանքին որակավորվելու համար մենք պետք է Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով փոխվենք՝ կրկին ծնվենք և մաքրվենք մեղքից: Ութ տարեկանից ցածր երեխաներն, այնուամենայնիվ, առանց մեղքի են և փրկվում են Քավության միջոցով (տես Մոսիա 3.16, 21; Մորոնի 8.10–12):

Մեզ բոլորիս համար, ովքեր հասնում են պատասխանատվության տարիքի, կա մի հրաշալի ծրագիր, որը մեզ թույլ է տալիս մաքրվել մեղքից և նախապատրաստվել հավերժական կյանքի համար: Այդ նախապատրաստությունը սկսվում է քահանայության իշխանության կողմից մկրտությամբ և Սուրբ Հոգու ստացումով: Այնուհետև մենք պետք է միշտ հիշենք Փրկչին և պահենք այն պատվիրանները, որ Նա տվել է մեզ:

Բենյամին թագավորը Մորմոնի Գրքում հայտնեց իր ժողովրդին այն ուրախության մասին, որը գալիս է մեղքի ներման զգացումից Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով: Այնուհետև նա ուսուցանեց, որ որպեսզի շարունակեն ներվել իրենց մեղքերից, նրանք պետք է ուսուցանեն իրենց երեխաներին ծառայել մեկը մյուսին, և նրանք հնարավորինս պետք է առատաձեռն լինեն՝ իրենց շրջապատող մարդկանց ժամանակավոր և հոգևոր կարիքները հոգալու համար (տես Մոսիա 4.11–16):

Նա նաև ուսուցանեց. «Եվ ահա, ես ասում եմ ձեզ այս բաները, որ դուք կարողանաք իմաստություն սովորել. որ դուք կարողանաք սովորել, որ երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17):

Հիսուսը ման էր գալիս Իր ավետարանն ուսուցանելով և բարիք անելով (տես Գործք Առաքելոց 10.38): Նա բուժում էր հիվանդներին: Իր զորությամբ Նա կերակրում էր հազարավորների, երբ նրանք սոված էին կամ առանց ուտելիքի (տես Մատթէոս 14.14–21; Յովհաննէս 6.2–13): Իր Հարությունից հետո Նա կերակրեց Իր Առաքյալներից մի քանիսին, երբ նրանք Գալիլեայի ծովի եզրին էին (տես Յովհաննէս 21.12–13): Ամերիկաներում Նա բուժեց հիվանդներին և օրհնեց երեխաներին մեկ առ մեկ (տես 3 Նեփի 17.7–9, 21):

Հակոբոս Առաքյալը մեզ ուսուցանել է, թե ինչպես է ուրիշներին ծառայելու ցանկությունը բխում մեր երախտագիտությունից այն ամենի համար, ինչ Տերն արել է մեզ համար.

«Բայց նա որ ազատութեան կատարեալ օրէնքի մէջ աչքը գցած մտիկ տուաւ և նորանում կացաւ, նա մոռացուկ լսող չեղաւ այլ գործ կատարող. նա իր անելովը երանելի է: . . .

Սուրբ և անարատ կրօնասիրութիվնն Աստուծոյ և Հօր առաջին սա է. որբերին և այրիներին այցելել նորանց նեղութեան մէջ, իր անձն աշխարհքից անարատ պահել» (Հակոբոս 1.25, 27):

Ձեր մաքրվելու հավաստիացումներից մեկը հանուն Փրկչի ուրիշներին ծառայելու ձեր աճող ցանկությունն է: Տնային և այցելությամբ ուսուցանումը դառնում է ավելի շատ ուրախություն և ավելի քիչ որպես պատասխանատվություն: Դուք ավելի հաճախ եք կամավոր ծառայում տեղական դպրոցում կամ օգնում հոգ տանել ձեր համայնքի կարիքավորների մասին: Թեև դուք գուցե քիչ գումար ունեք, որպեսզի տաք նրանց, ովքեր ավելի քիչ ունեն, դուք կցանկանայիք ավելի շատ ունենալ, որպեսզի կարողանայիք ավելի շատ տալ (տես Մոսիա 4.24): Դուք ավելի շատ եք ցանկանում ծառայել ձեր երեխաներին և ցույց տալ նրանց ինչպես ծառայել ուրիշներին:

Երբ ձեր էությունը փոխվում է, դուք առանց ճանաչվելու ավելի մեծ ծառայություն կատարելու ցանկություն կզգաք: Ես ճանաչում եմ Փրկչի հետևորդների, ովքեր տվել են գումարի և ծառայության մեծ նվերներ այն վճռականությամբ, որ ոչ ոք, բացի Աստծուց և իրենց երեխաներից, չի իմանա այդ մասին: Աստված ընդունել է իրենց ծառայությունը՝ օրհնելով նրանց այս կյանքում, և Նա կօրհնի նրանց գալիք հավերժական կյանքում (տես Մատթէոս 6.1–4; 3 Նեփի 13.1–4):

Երբ պահել եք ուրիշներին ծառայելու պատվիրանը (տես Մատթէոս 22.39), դուք ունեցել եք հպարտության զգացումի փոփոխություն: Փրկիչն ուղղեց Իր Առաքյալներին, երբ նրանք մրցում էին, թե ով է լինելու նրանցից ամենամեծը: Նա ասաց.

«Ոչ էլ ուսուցիչներ կանչուեցեք, որովհետև մէկն է ձեր Ուսուցիչը՝ Քրիստոսը:

Եվ ձեզանից մեծը թող ձեր ծառան լինի» (Մատթէոս 23.10–11):

Փրկիչն ուսուցանում է մեզ, թե ինչպես կարող ենք սովորել ծառայել ուրիշներին: Նա ծառայեց կատարելապես, և մենք պետք է սովորենք ծառայել այնպես, ինչպես Նա սովորեց՝ տող առ տող (տես ՎԿՈ 93.12–13): Մեր մատուցած ծառայության միջոցով մենք կարող ենք ավելի շատ նմանվել Նրան: Մենք կաղոթենք մեր սրտի ողջ եռանդով, որպեսզի սիրենք մեր թշնամիներին այնպես, ինչպես Նա է սիրում նրանց (տես Մատթէոս 5.43–44; Մորոնի 7.48): Այնուհետև մենք վերջապես կկարողանանք պատրաստ լինել Նրա և մեր Երկնային Հոր հետ հավերժական կյանքին:

Ես խոստանում եմ, որ մենք կարող ենք ավելի կատարելապես ծառայել, եթե հետևենք Փրկչի ուսմունքներին ու օրինակին:

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Մ. Ռասսել Բալլարդը խրախուսել է մեզ աղոթել ծառայելու հնարավորությունների համար. «Ձեր ամենօրյա առավոտյան աղոթքում խնդրեք Երկնային Հորը առաջնորդել ձեզ, որպեսզի գտնեք Իր թանկագին զավակներից որևէ մեկին ծառայելու հնարավորություն: Ապա զբաղվեք ձեր գործերով, . . . փնտրելով որևէ մեկին, որ օգնեք» («Եռանդուն ներգրավված», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2012, 31): Նրանց, ում ուսուցանում եք, կարող եք հրավիրել նպատակ սահմանել, որպեսզի ամեն առավոտ աղոթեն ծառայելու հնարավորությունների համար և այնուհետև հետամուտ լինեն դրան ողջ օրվա ընթաքում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Պատասխան նրա աղոթքին

Սիֆիլիլ Կումալո

Մի երեկո իմ ընկերներից մեկը, ով այլ հավատք ուներ, այցելեց ինձ: Սովորաբար ես մենակ եմ ուսումնասիրում իմ սուրբ գրությունները, և ես պատրաստել էի դրանք այդ երեկո ուսումնասիրելու համար: Ես հուշում զգացի հրավիրել նրան միանալ իմ սուրբ գրությունների ուսումնասիրությանը, բայց վախեցա և փոխարենը սկսեցի մենակ ուսումնասիրել: Ես գիտեի, որ անտեսել եմ Հոգու հուշումը: Մի քանի րոպե անց ես զգուշորեն հարցրեցի. «Կուզենայի՞ր ինձ հետ ուսումնասիրել սուրբ

գրությունները»: Իմ ընկերն առանց վարանելու պատասխանեց. «Այո»:

Այնուհետև մենք կարդացինք Մորմոնի Գրքից: Նա ինձ մի քանի հարց տվեց, և ես զգում էի, թե ինչպես էր Հոգին առաջնորդում ինձ պատասխանելիս: Ես բերեցի իմ վկայությունը Մորմոնի Գրքի ճշմարտացիության մասին: Երբ ես սա արեցի, նա ինձ ասաց. «Ամբողջ օրը ես լացել ու վախեցել եմ: Ես նոր էի աղոթել Աստծուն օգնության համար, երբ դու հրավիրեցիր ինձ կարդալ սուրբ գրությունները քեզ հետ: Ես հիմա շատ ավելի լավ եմ զգում ինձ: Շնորհակալություն»:

Տերն ինձ օգտագործեց որպես գործիք աղոթքին պատասխանելու և կարիքի մեջ գտնվող Իր զավակներից մեկին ծառայելու համար: Ես գիտեմ, որ հուշումներն իմաստուն, փառավոր Հոր աստվածային ցուցումներն են: Երբ մենք կողքի ենք դնում մեր վախերը, մենք մեր խոնարհության միջոցով թույլ ենք տալիս Նրան դրսևորել Իր զորությունը:

Հեղինակն ապրում է Գառութենգում, Հարավային Աֆրիկա:

ԵՐԵԽԱՆԵՐ

Փնտրեք ծառայելու ուղիներ

Դուք կարող եք ընտրել հետևել Հիսուս Քրիստոսին և ծառայել ուրիշներին: Նկարեք ձեզ ընտանիքի անդամներից մեկին կամ ընկերոջը ծառայելիս և դրեք ձեր նկարը մի այնպիսի տեղում, որպեսզի այն հիշեցնի ձեզ բարի լինել ամեն օր:

© 2014 Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/13: Թարգմանության հաստատումը. 6/13: *First Presidency Message, March 2014.* Armenian.- թարգմանությունը 10863 201

Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելությունը. Աշխարհի Լույսը

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Աղոթքով ուսումնասիրեք այս նյութը և մտածեք, թե ինչով կիսվել: Ինչպե՞ս է Փրկչի կյանքի և առաքելության մասին հասկացողությունն ավելացնում ձեր հավատքը Նրա նկատմամբ և օրհնում նրանց, ում մասին դուք հոգ եք տանում այցելող ուսուցիչների միջոցով: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք www.reliefsociety.lds.org:

Սա այցելող ուսուցիչների ուղերձների շարքից է, որը նկարագրում է Փրկչի առաքելության ուղղությունները:

Երբ մենք հասկանում ենք, որ Հիսուս Քրիստոսն Աշխարհի Լույսն է, մենք մեծացնում ենք մեր հավատքը Նրա նկատմամբ և դառնում ենք լույս ուրիշների համար: Քրիստոսը վկայեց Իր դերի մասին որպես «ճշմարիտ լույսը, որը լուսավորում է ամեն մարդու [և կնոջ], ով գալիս է աշխարհ» (ՎևՈ 93.2) և խնդրեց, որ մենք «բարձր [պահենք] [Նրա] լույսը, որպեսզի այն լույս տա աշխարհին» (3 Նեփի 18.24):

Մեր մարգարեները նույնպես վկայել են Քրիստոսի Լույսի մասին: Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, ասել է. «Ամեն անգամ, երբ դուք ընտրեք փորձել ապրել Փրկչի նման, դուք կամրացնեք ձեր վկայությունը: Դուք ժամանակին կիմանաք, որ Նա Աշխարհի Լույսն է: . . . Դուք ձեր կյանքում ուրիշներին կարտացոլեք Քրիստոսի Լույսը»:[1]

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Քվենթին Լ. Քուքն ասել է աշխարհի լույսի մասին, որը մենք պետք է լինենք. «Մենք պետք է պաշտպանենք մեր ընտանիքներին և առաջին գծում միասին լինենք բարի կամքի տեր բոլոր մարդկանց հետ՝ անելով հնարավորինը համայնքներում՝ լույսը, հույսը և բարոյականությունը պահպանելու համար»:[2]

Սուրբ գրություններից

Յովհաննէս 8.12; Վարդապետություն և Ուխտեր 50.24; 115.5

Մեր պատմությունից

Վերջին Օրերի Սուրբ կանայք այսօր շարունակում են բարձր պահել իրենց լույսը.

Չինաստանում Հոնկոնգի բարձրահարկ շենքի 80-րդ հարկում ֆիզիկական սահմանափակումներով մի ամուրի քույր, ով միակ Վերջին Օրերի Սուրբն էր իրենց ընտանիքում, ստեղծել էր մի տուն, որը մի հանգստի վայր էր, որտեղ նա և այցելուները կարող էին զգալ Սուրբ Հոգու ազդեցությունը: Նա իրեն մոտ էր պահում իր սուրբ գրությունները, Սփոփող Միության իր ձեռնարկները և իր երգարանը: Նա գնաց տաճար, որպեսզի կատարեր արարողություններ իր նախնիների համար:[3]

Բրազիլիայում մի արդարակյաց մայր մեծացնում էր իր երեխաներին ավետարանի լույսով: Երեխաների Միության երգերը լցնում էին իր կարմիր աղյուսե տան օդը, իսկ տաճարների, Աստծո մարգարեների և Փրկչի նկարները՝ *վերցված Լիահոնայից,* ծածկում էին պատերը: Նա և իր ամուսինը զոհաբերություն կատարեցին, որպեսզի կնքվեին տաճարում, որպեսզի իրենց երեխաները կարողանային ծնվել ուխտի մեջ: Նրա մշտական աղոթքն էր, որ Տերն օգներ իրեն դաստիարակել իր երեխաներին ավետարանի լույսով, ճշմարտությամբ ու զորությամբ:[4]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հենրի Բ. Այրինգ, «Կենդանի վկայություն», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2011, 128:
2. Քվենթին Լ. Քուք, «Թող լույս լինի» *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2010, 30:
3. Տես *Իմ արքայության դուստրերը. Սփոփող Միության պատմությունը և աշխատանքը* (2011), 163–64:
4. Տես *Իմ արքայության դուստրերը,* 164:

Ի՞նչ կարող եմ ես անել:

1. Քննարկեք, թե ինչ է նշանակում լինել աշխարհի լույսն այսօր:

2. Խորհեք այն մասին, թե ինչպես է Քրիստոսի լույսին հետևելն օգնում ձեզ հաղթահարել փորձությունները:

© 2014Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/13: Թարգմանության հաստատումը. 6/13: *Visiting Teaching Message, March 2014.* Armenian.-թարգմանությունը 10863 201